1 *Կամաւն Ա՛յ, ես Դաւիթ, թոռն*
2 *Վասակայ եռու իմ հալ(ալ) գանձ(ա)յ-*
3 *գին հայրենացն ի Կոհանքն Ի.*
4 *աւրավար հող ի սբ խաչերու մի-*
5 *ջեւն։ Ով խափան(է) դատի յԱ՛(յ)։ Թվ. ՉՀԵ։*

Մանոթություն.— *Լավ չեն հասկացվում ի սբ խաչերու միջև բառերը։ Ըստ երևույթին Դավթի՝ Կոհանքում գտնվող գանձագին հայրենիքի երեսուն օրավար հողը* ս. խաչերի *(խաչքարերի, մատուռների) միջև ընկած տարածության մեջ է եղել։*

Տարբերություն.— 1. Ջալ, *որից և արտագրելով* Վիմ Վասակ *բառը կարդացել են* Ալավկայ։

2. Իմ հալալ գանձ[ա]յգին հայրենացն ի Կոհանքն Ջալ, *որից արտագրելով նաև* Վիմ *կարդացել են* իմ հալալ գանձագին հայրենական ձիթահանքն։

3. Ի սբ խաչերու միջևն Ջալ *և* Վիմ *կարդացել են* վերի խաչերի մեջն է։

4. Թվ ՉՀԵ Ջալ *և* Վիմ *կարդացել են՝ ի* թուին ՉԵ։ *Սխալ վերծանումներն արդյունք են արձանագրության մեջ եղած բազմաթիվ անսովոր փակագրերի։*

22. Ներքին ժամատան հր պատին նեռսից, նախորդից վերեվ

ԺԳ դար

Հրատարակվում է առաջին անգամ

1 *Հոգոյն գալատեանն*
2 *պատարագն մի՝ Մար-*
3 *իամա է, վասն միաբ-*
4 *անական յոգոյն, մինչ*
5 *ի գալուստն Քի։ Ով խա-*
6 *փանէ նզոված է յԱ՛յ։*

Մանոթություն.— *Երկրորդ տողում* պատարագն մի *պետք է հասկանալ տաճարի սեղաններից միայն մեկի վրա կատարվող պատարագը (մի պատարագը)։*

23. Ներքին ժամատան հր պատին, մեծ պատուհանի մոտ, խիստ մաշված

ԺԲ—ԺԳ դար

Հրատարակվում է առաջին անգամ

1 . . . *նտինս հայր Յովանէս*
2 . . . . . .

Մանոթություն.— *Գրերի հետքերը երևում են 7 տողերի վրա։*

24. Ներքին ժամատան մեջ, բեկոր

ԺԲ դար

Հրատարակվում է առաջին անգամ